«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի ՀԵՌԱՎԱՐ ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ

ՈՐՈՇՈՒՄ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի նոյեմբերի 27-ի թիվ 1407-Ն որոշմամբ հաստատված «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Համալսարան) կանոնադրության 55-րդ կետով՝

Գիտական խորհուրդը որոշում է.

1. «Ուսման վճարի չափերի մասին» կանոնակարգը հաստատել նոր խմբագրությամբ (26-11-11-01):

2. «Ակադեմիական անձնակազմի մասին» կանոնակարգը հաստատել նոր խմբագրությամբ (26-11-11-02):

3. «Ուսման վճարի փոխհատուցման մասին» կանոնակարգը հաստատել նոր խմբագրությամբ (26-11-11-03):

4. Հաստատել «Հանրային առողջության ֆակուլտետի գործունեության» կանոնակարգի փոփոխությունները (26-11-11-04):

5. Հաստատել «Դեղագիտական ֆակուլտետի գործունեության» կանոնակարգի փոփոխությունները (26-11-11-05):

6. Հաստատել «Էլեկտրոնային համալսարան համակարգի մասին» կանոնակարգը (26-11-11-06):

7. «Գիտական և ճարտարագիտատեխնիկական կադրերի պաշտոնները, դրանց ներկայացվող նվազագույն չափանիշները և ատեստավորման» կարգը հաստատել նոր խմբագրությամբ (26-11-11-07):

8. Հաստատել «Քույրական գործ վիրահատարանում» մասնագիտությամբ մասնագիտացման ծրագիրը (26-11-11-08):

9. Հաստատել «Մանկական ինտենսիվ բժշկություն» նեղ մասնագիտությամբ մասնագիտացման ծրագիրը՝ նոր խմբագրությամբ (26-11-11-09):

10. Որոշումների կատարման հսկողությունը հանձնարարել Համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Ա.Ա.Մուրադյանին:

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ա.Ա.ՄՈՒՐԱԴՅԱՆ**

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ **Տ.Գ.ԱՎԱԳՅԱՆ**